ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը		*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Արձանագրություն	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԱԳՆՊՏ 2017.12.27/2(39)	*Ընդունման վայրը*	Մինսկ
Ընդունող մարմինը	Հայաստանի Հանրապետություն	*Ընդունման ամսաթիվը*	19.05.2011
Ստորագրող մարմինը		*Ստորագրման ամսաթիվը*	19.05.2011
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	31.08.2017	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2005 թվականի նոյեմբերի 25-ի՝ Երիտասարդության հետ տարվող աշխատանքի ոլորտում համագործակցության մասին Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունները (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով Անկախ Պետությունների Համագործակցության ճյուղային համագործակցության մարմինների ընդհանուր կարգի մասին ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ,

համաձայնեցին հետևյալի մասին՝

1. 2005 թվականի նոյեմբերի 25-ի՝ Երիտասարդության հետ տարվող աշխատանքի ոլորտում համագործակցության մասին Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների երիտասարդության հարցերով խորհրդի մասին կարգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1 «I. Ընդհանուր դրույթներ» վերնագրված բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«I. Ընդհանուր դրույթներ

1.1 Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների երիտասարդության հարցերով խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ստեղծվում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ երիտասարդության հետ տարվող աշխատանքի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) իրականացման համար:

1.2 Խորհուրդը կոչված է կազմակերպելու և համակարգելու պետությունների ղեկավարների խորհրդի, կառավարությունների ղեկավարների խորհրդի, արտաքին գործերի նախարարների խորհրդի և ԱՊՀ տնտեսական խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումը:

1.3 Խորհուրդը ԱՊՀ ճյուղային համագործակցության մարմին է և կոչված է ապահովելու երիտասարդական քաղաքականության բնագավառում փոխգործակցության համակարգումը:

1.4 Իր գործունեության ընթացքում Խորհուրդը ղեկավարվում է Անկախ Պետությունների Համագործակցության կանոնադրությամբ, հիմնարար միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ Անկախ Պետությունների

Համագործակցության շրջանակներում գործող, պետությունների ղեկավարների խորհրդի, կառավարությունների ղեկավարների խորհրդի, արտաքին գործերի նախարարների խորհրդի, ԱՊՀ տնտեսական խորհրդի որոշումներով, ինչպես նաև սույն Կարգով:

Խորհուրդն իր գործունեության համար հաշվետու է ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդին:

Խորհրդի աշխատանքի վերաբերյալ հաշվետվությունը սահմանված կարգով քննարկվում է պետությունների ղեկավարների խորհրդի, կառավարությունների ղեկավարների խորհրդի, արտաքին գործերի նախարարների խորհրդի, ԱՊՀ տնտեսական խորհրդի, Համագործակցության կանոնակարգային և այլ մարմիններին առընթեր Համագործակցության մասնակից պետությունների մշտական լիազոր ներկայացուցիչների խորհրդի, ինչպես նաև ԱՊՀ տնտեսական խորհրդին առընթեր տնտեսական հարցերով հանձնաժողովի նիստերում:

1.5 Խորհրդի քարտուղարության գործառույթները դրվում են ԱՊՀ այն մասնակից պետության պետական իշխանության մարմնի վրա, որի ղեկավարը նախագահում է Խորհրդում՝ ԱՊՀ գործադիր կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանման հետ համատեղ:

Խորհրդի քարտուղարության ղեկավար է համարվում Խորհրդում նախագահող պետության պետական իշխանության մարմնի ներկայացուցիչը, իսկ քարտուղարության ղեկավարի տեղակալ՝ ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչը: Քարտուղարությունն իրականացնում է Խորհրդի կազմակերպչական-տեխնիկական և տեղեկատվական գործունեության ապահովումը:

1.6 Խորհրդի աշխատանքային լեզուն ռուսերենն է:

1.7 Խորհուրդը յուրաքանչյուր տարի ԱՊՀ գործադիր կոմիտե է ներկայացնում տեղեկատվություն իր գործունեության վերաբերյալ:

1.8 Խորհուրդն իր աշխատանքը կազմակերպում է իր կողմից մշակված և հաստատված պլանների հիման վրա»:

1.2 «III. Խորհրդի ձևավորման կարգը» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«III. Խորհրդի ձևավորման կարգը

3.1 Խորհուրդը ձևավորվում է Համաձայնագրի մասնակից պետությունների լիազոր ներկայացուցիչներից՝ յուրաքանչյուր պետությունից երկու հոգի: Համաձայնագրի մասնակից պետությունների լիազոր ներկայացուցիչներ են համարվում պետական իշխանության համապատասխան մարմնի ներկայացուցիչները, ինչպես նաև պետական երիտասարդական քաղաքականության իրագործմանը մասնակցող հասարակական երիտասարդական և այլ միավորումների (կազմակերպությունների) ներկայացուցիչները:

Խորհրդի նիստին Խորհրդի անդամներին փոխարինող անձանց գործուղելիս վերջիններիս լիազորությունները պետք է հաստատվեն:

Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետություն Խորհրդում ունի մեկ ձայն:

3.2 Խորհրդի կազմում խորհրդակցական ձայնի իրավունքով մտնում են Խորհրդի քարտուղարության ղեկավարը, ինչպես նաև ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչը»:

1.3 «IV. Խորհրդի աշխատանքի կազմակերպումը» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1.[1] կետով՝

«4.1.1 Խորհրդի նիստերին Խորհրդի որոշմամբ կարող են մասնակցել երիտասարդության հետ տարվող աշխատանքի բնագավառում գործունեություն իրականացնող ԱՊՀ կազմի մեջ չմտնող այլ պետությունների ներկայացուցիչներ»:

4.2 կետի առաջին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4.2. Խորհրդում նախագահությունն իրականացվում է Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետության կողմից հաջորդաբար՝ ի դեմս դրա ներկայացուցչի՝ Համագործակցության մասնակից պետությունների անվանումների ռուսական այբուբենի հերթականության կարգով, մեկ տարի ժամկետով՝ Խորհրդի որոշմամբ այդ ժամկետը ևս մեկ տարով երկարաձգելու հնարավորությամբ»:

4.3 կետի առաջին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. «Անհրաժեշտության դեպքերում Խորհուրդը սահմանված կարգով ԱՊՀ կառավարությունների ղեկավարների Խորհրդի քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ»:

4.8 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4.8. Խորհրդի նիստերի անցկացման ֆինանսավորման հետ կապված ծախսերն իրականացվում են ընդունող ԱՊՀ մասնակից պետության պետական իշխանության համապատասխան մարմինների հաշվին: Խորհրդի անդամների և նիստերի մասնակիցների գործուղման ծախսերն իրականացվում են գործուղող ԱՊՀ մասնակից պետությունների կազմակերպությունների և պետական իշխանության մարմինների հաշվին»:

2. Սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում ստորագրող Կողմերի՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման վերաբերյալ ավանդապահի կողմից վերջին ծանուցման ստացման օրվանից 30 օր հետո:

Կատարված է Մինսկ քաղաքում, 2011թ. մայիսի 19-ին, մեկ բնօրինակից, ռուսերենով: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Արձանագրությունը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կփոխանցի դրա վավերացված պատճենը:

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստի օրակարգի 17.1 կետի վերաբերյալ «2005 թվականի նոյեմբերի 25-ի՝ երիտասարդության հետ տարվող աշխատանքի ոլորտում համագործակցության մասին Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին արձանագրության վերաբերյալ»

19 մայիսի 2011թ. **ք. Մինսկ**

Արձանագրությանը Ուկրաինայի մասնակցության վերաբերյալ որոշումը կընդունվի 2005 թվականի նոյեմբերի 25-ի՝ Երիտասարդության հետ տարվող աշխատանքի ոլորտում համագործակցության մասին Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների Համաձայնագրին Ուկրաինայի միանալու մասին որոշման ընդունման դեպքում:

Ուկրաինայի վարչապետ / ստորագրություն/ **Ն. Ազարով**

Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2017թ. օգոստոսի 31-ին